Ա Ռ Ա Ր Կ Ռ Ի Թ Յ Ռ Ի Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի ԹԻՎ 40, ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 49, ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ ԹԻՎ 57 ԵՎ 58 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 40 որոշման վերնագրում նշված «Փոփոխություններ» բառը պետք է փոխարինել «Վերաբաշխումներ» բառով /հիմք՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մաս/: Բացի այդ, որոշման 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով կատարված փոփոխությունները հակասում են համայնքի ավագանու ընդունած (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 100-Ն) որոշմանը: Որոշման 2-րդ կետում նշված «5432.0» թիվը պետք է փոխարինել «5382.0» թվով: Որոշման 4-րդ կետում «5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի» և «5129 (այլ մեքենաներ և սարքավորումներ) հոդվածի» թվերից և բառերից, ինչպես նաև 5-րդ կետում «5113 (շենքերի և շինությունների կապիտալ նորոգում) հոդվածի» և «5122 (վարչական սարքավորումներ) հոդվածի» թվերից և բառերից հետո պետք է լրացնել «առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների» բառերը:

Թիվ 49 որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասին:

Թիվ թիվ 57 և 58 որոշումները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի դրույթներին: Նշված որոշումները թերի են: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը: Որոշման մեջ կատարված փոփոխությունը ենթադրում է, որ վերնագիրը և բովանդակությունը նույնությամբ կրկնվելու են, ինչն այս պարագայում հնարավոր չէ: